

կապ տաճարը կը կանգնի, հին ատեն՝ Դեմետրիոնը կանգնած էր. որ Դիոսկուրեանց տաճարին հետ, թէատրոնով ու մայր եկեղեցիով՝ կը շրջապատէր « աւգոստական հրապարակը »¹, զոր հիմակ՝ ըստ Նոպլիէի « Ս. Սիմեոնի մէջ »² գրուածքին, մեծաւ մասամբ Ս. Լաւրենտիոս վկային ամբողջական շէնքը բոնած է:

Ըստ հին աւանդութեան մը, Ս. Հեղինէ Կոստանդիանոսի մայրը, հեթանոս տաճարը՝ քրիստոնէի փոխեց, անոր վրայ վանականաց ապաստանարան մ'աւելցրանելով Ս. Պանդալէոնի հովանաւորութեան ներքեւ: Լեւոն Իսաւրացւոյն օրով, քրիստոնեայք պատկերամարտից զայրութենէն փախչելով՝ ապաստանեցան յիտալիա և մասնաւոր կերպով ի Նոպոլի: Ահա ձիշտ այս ատենն է որ մեր երկիրներուն մէջ սկսան անթիւ վանքեր կառուցուիլ Ս. Բարսղի կանոններուն ներքեւ: Արեւելքէն հոս ապաստանող վանական կոյսերէն ու մանր, Լուսաւորիչ կոչուած՝ Հայաստանեայց Ս. Գրիգորի նշխարները միասին բերին, որոնք Ս. Գեևարիոսի սարկաւազատան մէջ զետեղուեցան, որոնց մօտ ծնունդ առաւ իրենց նախնական վանքը, (որուն պատճառաւ մինչեւ ցարգ ալ կը կոչուի Ս. Գրիգորի Հայոց Հոգեւորն³):

Երթալով աւելի ընդարձակուեցաւ, այնպէս որ այն Քոյրերը զրաւեցին ամբողջ Նոստրիանոս կոչուած կողմը⁴, վերոյիշեալ սարկաւազատան վերաբերեալ մատուցներուն ու տներով:

Հին վանքերն իրենց արտաքին ձեւով, լաւ է յիշել, արեւելքի Լաւրիներուն նման մենաստաններ էին, մեծաւ մասամբ շատ մը տուններէ կազմուած, իւրաքանչիւրին մէջ հաւատաւոր մը՝ երկու սպասաւորներով. չորս կողմը պարիսպ մը, ներսէն՝ մէկ կամ աւելի մատուցներ ու նենալով, պզտիկ քաղաքի մը նման:

Ըստ Կալանդէի « Սրբազան Ուղեցոյցին »⁵, բաց ի Ս. Գեևարիոսի հին եկեղեցիէն, կը յիշուին նաեւ Ս. Փրկչինն ու Ս. Սերաստիանոսինը՝ ծագմամբ ու թուականով՝ անստոյգ:

Ոմանց թուեցաւ թէ Սարգիս Առաջին կամ Սարգիս Գ. դուքսը հոն Հայոց Ս. Գրիգորի (անուան) եկեղեցի մը կառուցանել տուած ըլլայ, քանի որ Արքայապետին այդ զբոսական ընտանիքէն Մարիամ ոմն էր, և թէ՛ այդ թուականէն սկսեալ, Քոյրերը՝ Բարսեղեանի տեղ Բենեդիկտեանի փոխուած ըլլան: Այն հին եկեղեցին Պապ մինչեւ Ժ. Գար: Հոն Արքակոնայի Փրեզբերիկ Ա. 1443ին՝ զահաժառանգ հոգակեց զԱլփոնս Բ. իր որդին: Հոն տեղաւորուեցան 70 կանոնիկոս հաւատաւորներ, իրենց վանքը 1561ին փլած ըլլալով. սակայն փութով անկից ելան՝ Թագուհի Երկնից⁶ կոչուածը շինելու համար:

Այժմու վանքը 1561ին կառուցուած է, Լաւրետիա Գարաչչիոլոյի արքայապետի հանձնարարով, որ է ըսել Տրիտենդեան Ժողովքէն վերջ. որ՝ իր բազմաթիւ բարեկարգութեանց հետ՝ կուսանաց վանքերուն ալ իր առանձին ուշադրութիւնը դարձուց, և զիրենց պարտաւորեց միարանական կեանքի, վանական առանձնութեան և մինչեւ ցարգ յուծի եզող կարգ ու կանոնաց: Առաջին Արքայապետին որ հանդիսապէս ուխտեց՝ Յուլիա Գարաչչիոլոն եղաւ (27 Դեկտեմբ. 1570). ինչպէս նաեւ առաջին բարի օրինակը հանդիսացաւ, իր սեփական տունը՝ իր իսկ ձեռքով քանդելուն մէջ:

Իսկ հիմակուան եկեղեցին, 1574ին, նշանաւոր Յուլիա Գարաչչիոլոյի կամքովը շինուեցաւ՝ որ վանքին Տարեգիրքը⁷ յօրինեց, և որ իր Լուկրետիա մօրաքրոջ հետ՝ ձեռք ձեռքի տուած, հինը քանդելէն վերջ՝ Յովհ. Մկրտիչ Գաւանիի⁸ նկարչին զծագրութեամբ, նոր եկեղեցի մը կառոյց՝

1. Piazza augustale.

2. Nobile: Un mese a Napoli.

3. Fondaco (di S. Gregorio Armeno). Պանդոկ ըսել է, սակայն ըստ մեր եկեղեցական լեզուին և ըստ իմաստին՝ ճոզհալում զրինք:

4. Regione Nostriana (յառուկ անուն մ'է).

5. Galante: Guida Sacra.

6. Regina Caeli.

7. Fulvia Caracciolo: Cronaca del Monastero.

8. Giov. Battista Cavagni.